ԿԱՐՈՂՈՒՆԱԿԱՀԵՆ ԿՐԹԱԿԱՆ ՄՈԴԵԼԻ ՆԵՐԴՐՈՒՄԸ ՀՀ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

ԱՆՆԱԱ ՄԻՐԶԱՆՅԱՆ
ԿԶՆԱԿ հիմնադրամ, Երևան, ՀՀ
Էլ. հասցե՝ annaamirjanyan@gmail.com

DOI: 10.24234/scientific.v2i47.171

ԱՄՓՈՓՈՒՄ

Հասարակական կյանքում տեղի ունեցող կտրուկ փոփոխությունները հանգեցնում են կրթական համակարգում բարեփոխումների, որի արդյունքում վերանայվում է կրթության բովանդակությունը, ակնկալվող վերջնարդյունքները, ինչն էլ հանգեցնում է վերջիններիս չափելիության խնդրի առաջացմանը: Բուռն գլոբալիզացիան, տարբեր երկրների պատերազմական լարված իրավիճակները, մարդկային հարաբերությունների վիրտուալացումը, շփման բացակայությունը նոր իրականություն են թելադրում՝ առաջացնելով կարողունակություններով օժտված անձանց ձևավորման անհրաժեշտությունը: Այդ է վկայում 2005 թվականին Վարշավայում կայացած Եվրոպայի խորհրդի երրորդ գագաթնաժողովի ընթացքում պետությունների կառավարությունների ղեկավարների կողմից ամրագրված այն փաստը, որ ամբողջ աշխարհում կրթական համակարգի հիմքում պետք է լինի կարողունակությունների վրա հիմնված մոտեցումը: *(Կարողունակությունների կողմնորոշիչ շրջանակ,* 2020)*:* ՀՀ կրթական բարեփոխումների գործընթացում ևս ամրագրվեց կարողունակությունների վրա հիմնված մոտեցումը: ՀՀ կառավարության կողմից 2021 թվականին հաստատված նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչը, որպես հանրակրթության պետական չափորոշչի սկզբնական բաղկացուցիչ մաս, բխում է կարողունակությունների վրա հիմնված մոտեցումից:

Հոդվածի նպատակն է քննարկել ՀՀ նախադպրոցական կրթության կարողունակահեն մոդելի էությունը և բացահայտել վերջինիս ներդրման հետ կապված դժվարությունները: Հոդվածում կիրառված մեթոդներն են՝ տեսական նյութի վերլուծություն, դիտում, զրույց, փորձարարություն: Ուսումնասիրության ընթացքում արձանագրվել են կարողունակահեն կրթության կազմակերպման դժվարությունները թվով 542 ՀՀ փորձարկված ՆՈՒՀ-երում և մշակվել են դրանց հաղթահարման ուղիները:

Բանալի բառեր՝ կարողունակահեն կրթական մոդել, չափորոշիչ, փորձարկվող նախադպրոցական ուսումնական հաստատություններ, կրթական հիմնական ծրագիր:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«Կարողունակությունների կողմնորոշիչ շրջանակ՝ ժողովրդավարական մշակույթի համար» նախաձեռնությունը Եվրոպայի խորհրդի անդամ պետություններում և այլ երկրներում ծավալուն քննարկումների և փորձարկման արդյունք է: Շրջանակն առաջարկում է Ժողովրդավարական մշակույթի և միջմշակութային երկխոսության համար պահանջվող կարողունակությունների մոդել: Ըստ այդ մոդելի՝ առանձնացվում է ընդհանուր թվով 20 կարողունակություն: Կարողունակությունների հիմքում անձի արժեքների, վերաբերմունքի, հմտությունների, քննադատական ընկալման ու գիտելիքի ամբողջությունն է (*Կարողունակությունների կողմնորոշիչ շրջանակ,* 2020): Կարողունակությունների հիմնահարցը քննարկված է տարբեր հեղինակների մոտեցումներում, ովքեր առանձնացրել են թվով 3-ից մինչև 30 կարողունկություն: Ժակ Դելորը իր «Կրթություն. թաքնված գանձ» զեկույցում առանձնացրել է չորս կարողունակություն՝ «սովորել ճանաչել», «սովորել կատարել», «սովորել ապրել միասին, ապրել ուրիշների հետ», «սովորել ապրել» (Жак Делор, 1996): Ա. Վ. Խուտորսկին առանձնացրել է կարողունակությունների յոթ խումբ՝ արժեքային-իմաստային, ընդհանուր մշակութային, ուսումնաճանաչողական, տեղեկատվական, հաղորդակցական, սոցիալ-աշխատանքային, անձնային ինքնակատարելագործման (Хуторской А.В., 2003): Նա կարծում է, որ կարողունակությունը «անձի փոխկապակցված որակների (գիտելիք, կարողություն, հմտություն, գործունեության միջոց) ամբողջությունն է, որը ձեռք է բերվում որոշակի առարկաների շրջանակում և անհրաժեշտ է տվյալ ոլորտում արդյունավետ գործունեություն ծավալելու համար»: Իսկ կարողունակ լինելը նա բնութագրում է որպես «անձի կողմից կարողունակությունների տիրապետում, որն իր մեջ ներառում է նաև անձի՝ տվյալ առարկայի նկատմամբ վերաբերմունքը» (Хуторской А.В., 2003): Բազմաթիվ երկրներ որդեգրել են կարողունակահեն կրթական մոտեցումը: «Կարողունակ» և «կարողունակություն» եզրույթները այս մոտեցման հիմնական հասկացություններն են: Հայաստանի Հանրապետության կրթական համակարգը Հանրակրթության պետական չափորոշչով ամրագրել է կարողունակահեն կրթական մոտեցումը: Նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչը, որպես հանրակրթության պետական կրթական չափորոշչի բաղկացուցիչ մաս, բխում է կարողունակությունների վրա հիմնված մոտուցումից՝ ապահովելով նախադպրոցականի անձի ձևավորումն ու զարգացումը (*Նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչ*, 2021):

ՔՆՆԱՐԿՈՒՄ

2021 թվականի մայիսի 13-ին Հայաստանի Հանրապետության կառավարության N 744 - Ն որոշմամբ հաստատվեց Նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչը, որը բխում է կարողունակությունների վրա հիմնված մոտեցումից, սահմանում է նախադպրոցական տարիքի երեխաների (ըստ տարիքային խմբերի) զարգացման կրթական ծրագրերի բովանդակությունը, ուսումնական բեռնվածության առավելագույն ծավալը, նախադպրոցական տարիքի երեխաների կրթության և զարգացման վերջնարդյունքների ապահովման հիմքերը: Չափորոշով առանձնացված են սանի զարգացման հինգ ոլորտ՝ շարժողական, խոսքի և հաղորդակցական, Իմացական, հուզական, սոցիալ-անձնային, ինքնասպասարկման, անվտանգության և առողջ ապրելակերպի:

Նշված հիգ ոլորտներով առանձնացված են վերջնարդյունքներ՝ ըստ տարիքային խմբերի, որոնց ապահովումը նպաստում է նախադպրոցական կրթության ավարտին ինը առանցքային կարողունակությունների ձևավորմանը: Նախադպրոցական տարիքում կարողունակությունները սահմանվում են որպես նախադպրոցական տարիքի երեխաների կողմից ուսուցման և դաստիարակության գործընթացում ձեռք բերված գիտելիքների, հմտությունների, արժեքների և դիրքորոշումների հիման վրա ըստ իրավիճակի արդյունավետ ու պատշաճ արձագանքելու ձևեր (*Նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչ,* 2021):

Նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշչով սահմանվում են հետևյալ կարողունակությունները՝ 1) լեզվական և հաղորդակցական, 2) ճանաչողական և շարժառիթային (մոտիվացիոն), 3) ինքնաճանաչողական և սոցիալական, 4) ժողովրդավարական և քաղաքացիական, 5) թվային և մեդիա, 6) մշակութային, 7) մաթեմատիկական և տեխնիկական, 8) տնտեսական, 9) ֆիզիկական կուլտուրայի և առողջության պահպանմանը միտված:

Նշված կարողունակությունները ենթադրում են նախադպրոցական կրթության ավարտին նախադպրոցականի ձևավորումը, ով կկարողանա հաղորդակցվել տարբեր իրավիճակներում և միջավայրերում՝ ըստ անհրաժեշտության կիրառելով նաև իր տարիքին համապատասխան մեդիա գործիքներ, ակտիվ մասնակցություն կունենա հասարակական կյանքին, ճանաչողական հետաքրքություն կցուցաբերի շրջապատող աշխարհի հանդեպ, կկարողանա ինքնուրույն կողմնորոշվել և լուծումներ գտնել տարբեր խնդրահարույց իրավիճակներում, կդրսևորի քննադատական վերաբերմունք շրջապատող միջավայրի հանդեպ, կդրսևորի ինքնուրույնություն, կունենա ինքնասպասարկման և ինքնակազմակերպման հմտություններ, կտիրապետի առողջ ապրելակերպի վարման հիմնական կանոններին, բարեվարքության և սոցիալական պարզագույն կանոններին (Մանուկյան Մ., Ամիրջանյան Ա. և այլոք, 2024):

Նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշչի հիման վրա մշակվել են կրթական ծրագրեր նախադպրոցական տարիքային բոլոր՝ վաղ մանկության տարիքի առաջին,

վաղ մանկության տարիքի երկրորդ, կրտսեր առաջին, կրտսեր երկրորդ, միջին և ավագ խմբերի համար: Կրտսեր առաջին (2-3 տարեկաններ), կրտսեր երկրորդ (3-4 տարեկաններ), միջին (4-տարեկաններ) և ավագ (5-6 տարեկաններ) խմբերի նախադպրոցական կրթական հիմնական ծրագրերում առանձնացվել են հետևյալ ծրագրային բաղադրիչները՝ խոսքի զարգացում, հապավումը՝ (ԽԶ), ինձ շրջապատող աշխարհը, հապավումը՝ (ԻՇԱ), մաթեմատիկական տարրական պատկերացումներ, հապավումը՝ (ՄՏՊ), ֆիզկուլտուրա, հապավումը՝ (Ֆ), երաժշտություն, հապավումը՝ (Ե), Կերպարվեստ և կառուցողական աշխատանք, հապավումը՝ (ԿԿԱ):

Կրտսեր առաջին խմբի ծրագրում «Մաթեմատիկական տարրական պատկերացումներ» ծրագրային բաղադրիչը ներառված է «Ինձ շրջապատող աշխարհը» բաղադրիչում: Այս զատումը խիստ պայմանական է, քանի ծրագրային բաղադրիչներում տրված վերջնարդյունքները կրկնվող և միմյանց լրացնող են: Դրանք ապահովում են նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշչով առանձնացված ոլորտային վերջնարդյունքների իրականացումը: Վերջնարդյունքները ներկայացվում են միասնացման (ինտեգրման) սկզբունքով՝ ներբաղադրիչային, միջբաղադրիչային կապերի ապահովմամբ և շեշտադրմամբ: Աշխատանքն ավելի արդյունավետ է և նպատակաուղղված, երբ ուսումնադաստիարակչական աշխատանքները կազմակերպվում են թեմատիկ միավորներով (Նկար 1) (Մանուկյան Մ., Ամիրջանյան Ա. և այլոք, 2024).

Նկար 1.

Թեմատիկ միավորի կազմում



Կարողունակահեն կրթական մոդելի ներդրումը Հայաստանի Հանրապետությունում փուլային գործընթաց է: Կրտսեր առաջին, կրտսեր երկրորդ, միջին և ավագ տարիքային խմբերի

համար մշակված ծրագրերը փորձարկվել Հայաստանի Հանրապետության մի շարք նախադպրոցական ուսումնական հաստատություններում քայլ առ քայլ, մասնավորապես՝ 2022-2023թթ.–ին ընդհանուր թվով՝ 60, 2023-2024 թթ.–ին ընդհանուր թվով՝ 130, 2024-2025 թթ.–ին ընդհանուր թվով՝ 352:

Նշենք, որ վաղ մանկության տարիքի առաջին և վաղ մանկության տարիքը երկրորդ խմբերի ծրագրերը դեռևս չեն փորձարկվել՝ տարիքային այդ խմբերի բացակայության պատճառով:

Փորձարկման գործընթացի մեկնարկից առաջ նախադպրոցական ուսումնական հաստատությունների մանկավարժական աշխատողները վերապատրաստվել են՝ ծանոթանալով կատարված բովանդակային փոփոխություններին:

Փորձարկման ընթացքում մեր կողմից պարբերաբար իրականացվել են մշտադիտարկումներ, որոնց արդյունքում վերհ են հանվել մի շարք դժվարություններ, մասնավորապես՝

- մանկավարժական աշխատողները տարիներ շարունակ չեն վերապատրաստվել, և միայն տեղեկատվական վերապատրաստումները բավարար չեն փորձարկման գործընթացն արդյունավետ իրականացնելու և բովանդակային խնդիրները վերհանելու համար:
- Մանկավարժական կադրերի, ինչպես նաև սպասարկող անձնակազմի խիստ պակասը լուրջ մարտահրավեր են կարողունակահեն կրթական մոդելի արդյունավետ ներդրման համար:
- ՆՈՒՀ-երի մանկավարժական աշխատողների թվային և մեդիա կարողությունների մակարդակը բավարար չէր պարբերաբար հեռավար խորհրդատվություններ իրականացնելու համար:
- Փորձարկման գործընթացը մեկնարկելիս ՆՈՒՀ-երին տրամադրված մեկ ուսումնամեթոդական ձեռնարկը բավարար չէր մասնագիտական տարբեր հարթությունների վրա գտնվող մասնագետների կարիքների բավարարման համար: Խաղային մեթոդների կիրառումը գրեթե բացակայում է ՆՈՒՀ-երում: Ուստի, ուսումնական նյութերի, ուսումնամեթոդական ձեռնարկների բացակայությունը մեծ դժվարություններ է առաջացնում մանկավարժների համար:
- Մանկավարժական աշխատողների, առավել ևս տնօրենների մեծ մասը չունեն մասնագիտական կրթություն: Դա էապես անդրադառնում է ուսումնադաստիարակչական գործընթացի արդյունավետության վրա:
- Համայնքների խոշորացան հետևանքով մի քանի ՆՈՒՀ-եր միավորվել են: Օրինակ, Լոռու, Սյունիքի մարզում կան հաստատություններ, որոնք մինչև 5-6 մասնաճյուղ ունեն, ինչն էլ առաջ է բերում արդյունավետ կառավարման դժվարություններ՝ անդրադառնալով նաև ուսումնադաստիարակչական գործընթացի կազմակերպման վրա:
- Ուսումնադաստիարակչական աշխատանքների պլանավորման հետ կապված մեթոդական մեծ աջակցության կարիք կա: Երկար տարիներ համակազմերն աշխատել են կաղապարվող

աշխատանքային փաթեթներով և փորձարկման սկզբնական շրջանում ուսումնադաստիարակչական աշխատանքների պլանավորման հետ կապված դժվարություններ են առաջացել:

- Խնդիր կա նաև համընդհանուր ներառական մտածողության ձևավորման, վերաբերմունքի փոփոխության հետ կապված, ինչն էլ առաջ է բերում այդ ուղղությամբ աշխատանքի իրականացման անհրաժեշտություն:
- Մեկ այլ լուրջ խնդիր էր նաև պատերազմական իրավիճակը, երբ սահմանային հաստատությունները (Կապան, Գորիս, Վարդենիս, Ջերմուկ) փակվում էին կամ գործում էին ոչ ամբողջ հզորությամբ, ինչը ևս բարդացնում է չափորոշչի, հետևապես ծրագրերի փորձարկման գործընթացը:

Այդուհանդերձ, հաստատություններում կան մոտիվացված համակազմեր, որոնք ձգտում են բովանդակային փոփոխությունների:

Փորձարկման գործընթացում մանկավարժական համակազմերի կողմից կատարվեցին կարողունակահեն կրթական մոդելի ներդրման վերաբերյալ բազմաթիվ դիտարկումներ և առաջարկություններ, որոնք, հաջորդիվ, հիմք հանդիսացան Նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշչի և նախադպրոցական կրթական հիմնական ծրագրերի լրամշակման համար:

Հատկանշական է, որ համակազմերի դիտարկումների հիման վրա նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշչի ոլորտային մի շարք վերջնարդյունքներ վերանայվեցին և ծրագրային բաղադրիչների վերջնարդյունքներն ընդհանրացվեցին ոլորտային զարգացման վերջնարդյունքներում՝ հստակ ապահովվելով ծրագրերի և չափորոշչի կապը: Նախադպրոցական կրթության ավարտին ակնկալվող կարողունակություններում սահմանված այն վերջնարդյունքները, որոնք ոչ չափելի և ոչ իրատեսական էին, լրամշակվել և հսակեցվել են: Իսկ լրամշակված ծրագրերում առավել շեշտադրվել է թեմատիկ ուսուցումը, որը ենթադրում է կրթական ծրագրի տարբեր բաղադրիչների միավորում՝ մեկ հետաքրքիր գաղափար ուսումնասիրելու միջոցով: Այն օգնում է սաներին տեսնելու և հասկանալու ուսումնասիրվող երևույթների միջև առկա կապերը և դրանց առնչությունը կյանքի հետ (Մանուկյան Մ. , Ամիրջանյան Ա. և այլոք, 2024):

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով, հենվելով տեսական վերլուծությունների և մեր կողմից ՀՀ նախադպրոցական ուսումնական հաստատություններում կարողունակահեն կրթական մոդելի փորձարկման գործընթացից ստացված արդյունքների վրա, կարող ենք նշել՝

- կարողունակահեն կրթական մոդելն ապահովում է նախադպրոցականի անձի ամբողջական զարգացումը,
- ՀՀ նախադպրոցական ուսումնական հաստատություններում կարողունակահեն կրթական մոդելի ներդրումը հնարավորություն է տալիս առավել չափելի դարձնել այն վերջնարդյունքները, որոնք ակնկալվում են նախադպրոցական կրթությունից,
- նշված մոդելն ապահովում է մանկավարժական աշխատողների մասնագիտական անընդհատ աճն ու զարգացումը,
- կարողունակահեն կրթական մոդելն ապահովում է նախադպրոցական կրթության ամբողջականությունը, երբ ակնհայտ է դառնում չափորոշչային վերջնարդյունքների, ծրագրային բաղադրիչների, ուսումնադաստիարակչական աշխատանքների պլանավորման միջև եղած կապերը՝ նպաստելով աճող սերնդի պատշաճ զարգացմանը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Կարողունակությունների կողմնորոշիչ շրջանակ՝ ժողովրդավարական մշակույթի համար (Vol. 1). (2020). Եվրոպայի խորհուրդ.

Մանուկյան Մ., Ամիրջանյան Ա. և այլոք. (2024). *Նախադպրոցական կրթություն*. Յունիսեֆ.

Միտոյան Հ., Սմբատյան Լ. (2010). *Ուսումնական ձեռնարկ մանկապարտեզի համար*. Երևան.

Նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչ. (2021). ՀՀ կառավարության N 744-Ն որոշում.

Жак Делор. (1996). *Образование: сокрытое сокровище*. ЮНЕСКО.

Хуторской, А. В. (2003). Ключевые компетенции как компонент личностно-ориентированной парадигмы образования. *Народное Образование, 2*.

REFERENCE LIST

Orientirovochnaya osnova vozmozhnostej demokraticheskoj kul'tury *(A guide to the possibilities of democratic culture)*. (Tom 1). (2020). Sovet Evropy.

Manukyan M., Amirdzhanyan A. i drugie. (2024). Doshkol'noe obrazovanie *(Preschool education)*. YUNISEF.

Mitoyan G., Smbatyan L. (2010). Razvivayushchee posobie dlya detskogo sada *(Developmental manual for kindergarten)*. Erevan.

Gosudarstvennyj obrazovatel'nyj standart doshkol'nogo obrazovaniya *(State educational standard of preschool education)*. (2021). Postanovlenie Pravitel'stva RA № 744-N.

ZHak Delor. (1996). Obrazovanie: skrytoe sokrovishche *(Education: A Hidden Treasure*). YUNESKO.

Hutorskoj, A. V. (2003). Klyuchevye kompetencii kak komponent lichnostno-orientirovannoj paradigmy obrazovaniya *(Key competencies as a component of the personality-oriented paradigm of education)*. Nacional'noe obrazovanie, 2.

РЕЗЮМЕ

ВНЕДРЕНИЕ КОМПЕТЕНТНОСТНОЙ МОДЕЛИ ОБРАЗОВАНИЯ В ДОШКОЛЬНЫХ ОБРАЗОВАТЕЛЬНЫХ УЧРЕЖДЕНИЯХ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

АННА АМИРДЖАНЯН

Резкие изменения, происходящие в общественной жизни, приводят к реформам в системе образования, в результате которых пересматривается содержание образования и ожидаемые результаты, что приводит к возникновению проблемы измеримости последнего. Стремительная глобализация, напряженные военные ситуации в разных странах, виртуализация человеческих отношений, отсутствие контактов диктуют новую реальность, создавая необходимость формирования личности, наделенной способностями. Об этом свидетельствует тот факт, что главы государств и правительств в ходе Третьего саммита Совета Европы, состоявшегося в Варшаве в 2005 году, подтвердили, что основой системы образования во всем мире должен быть компетентностный подход.

Компетентностный подход был закреплен и в процессе образовательных реформ в Республике Армения. Государственный образовательный стандарт дошкольного образования, утвержденный Правительством Республики Армения в 2021 году, как начальный компонент государственного стандарта общего образования, исходит из компетентностного подхода.

Целью статьи является обсуждение сущности компетентностной модели дошкольного образования в Республике Армения и выявление трудностей, связанных с ее реализацией.

Методы, используемые в статье: анализ теоретического материала, наблюдение, интервью, экспериментирование.

В ходе исследования были зафиксированы трудности в организации компетентностного образования в 542 пилотируемых дошкольных образовательных учреждениях Республики Армения и разработаны пути их преодоления.

***Ключевые слова**:* компетентностная образовательная модель, стандарт, пилотируемые дошкольные образовательные учреждения, основная образовательная программа.

ABSTRACT

INTRODUCTION OF A COMPETENC-BASED EDUCATIONAL MODEL IN PRESCHOOL EDUCATIONAL INSTITUTIONS OF THE REPUBLIC OF ARMENIA

ANNA AMIRJANYAN

The drastic changes taking place in public life lead to reforms in the education system, as a result of which the content of education and the expected outcomes are being reviewed, which leads to the emergence of the problem of measurability of the latter. Rapid globalization, tense war situations in different countries, the virtualization of human relations, the lack of contact dictate a new reality, creating the need to form individuals endowed with capabilities. This is evidenced by the fact that the heads of state and government, during the Third Summit of the Council of Europe held in Warsaw in 2005, affirmed that the basis of the education system worldwide should be a competency-based approach.

The competency-based approach was also enshrined in the process of educational reforms in the Republic of Armenia. The State educational standard for preschool education, approved by the Government of the Republic of Armenia in 2021, as an initial component of the state standard for general education, stems from the competency-based approach.

The aim of the article is to discuss the essence of the competency-based model of preschool education in the Republic of Armenia and identify the difficulties associated with its implementation.

The methods used in the article are: analysis of theoretical material, observation, interview, experimentation.

During the study, the difficulties in organizing competency-based education in 542 piloted preschool educational institutions of the Republic of Armenia were recorded and ways to overcome them were developed.

***Keywords**:* competency-based educational model, standard, piloted preschool educational institutions, basic educational curriculum.

Հոդվածը ստացվել է՝ 22.09. 2024

Հոդվածն ուղարկվել է գրախոսման՝ 27.09. 2024

Հոդվածը երաշխավորվել է տպագրության՝ 04.12.2024